

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

11.02.2017թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում:  
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
2. ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:  
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը:  
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների գնահատման համակարգում փոփոխությունների մասին:  
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

5. Ընթացիկ հարցեր:

5.1. ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտակ Վոլոդյայի Յուցուլյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

5.2. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Արթուր Թենգիզի Կոբեյանի հեղինակությամբ «Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման երաշխավորման մասին:

5.3. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտաժողովների կազմակերպման կանոնակարգի հաստատումը:

5.4. ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.5. ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.6. ԵՊՀ ԻՄ-ի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրության հաստատումը:

5.7. ԵՊՀ ԻՄ-ի կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021թթ.) հաստատելու մասին:

5.8. ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրը (2017-2021թթ.) կազմակերպելու կարգը հաստատելու մասին:

## 5.9. Հրանտ Վարդանյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Նախքան օրակարգի հարցերին անդրադառնալը ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի նոր վարիչին՝ պ.գ.թ. Գևորգ Մելքումյանին, որը մինչ այդ հանդիսանում էր Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը հույս հայտնեց, որ այդ պատասխանատու գործում Գ. Մելքումյանը կկատարի արդյունավետ աշխատանք՝ կապեր կհաստատի արտաքին գործընկերների հետ և կապահովի լրացուցիչ ֆինանսական ներհոսք ԵՊՀ ԻՄ: Մյուս կողմից, հաշվի առնելով Դավիթ Թինոյանի երկարամյա աշխատանքային փորձը, նա նշանակվել է Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար:

**Օրակարգի առաջին՝** «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատումը» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը կազմված է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը և ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ժամանակացույցները և ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը:

**Արտահայտվեցին** – ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, ՈԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 22/1**

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակացույցը, համաձայն հավելված 1:

**Օրակարգի երկրորդ՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ըստ ֆակուլտետների ներկայացրեց 2016 - 2017 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և կատարեց համեմատություն 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքների հետ: Նա նշեց, որ արդյունքները բավականին բարձր են, համեմատած նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ, ունենք առաջադիմության 9 տոկոսանոց աճ (84%-75,1%), ընդ որում բնական գիտությունների ֆակուլտետում՝ 3% աճ, (73%-70%), հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 10,6% աճ, (93% - 82,4%), տնտեսագիտության ֆակուլտետում առաջադիմությունը չի փոխվել (72%-72%), իսկ կիրառական արվեստի ֆակուլտետում գրանցվել է առաջադիմության ամենամեծ աճը՝ 13%, (89%-76%), մանրամասն տես հավելված 2-ում: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը կարևորեց արդյունքների օբյեկտիվության հանգամանքը, և հավելեց որ, ոչ մի ջանք չպետք է խնայել ԵՊՀ ԻՄ-ում որակյալ կրթություն ապահովելու համար, որը միտված է ՀՀ-ում ձևավորված աշխատաշուկայի պահանջարկը ապահովելու համար:

**Որոշում 22/2**

Ընդունել ի գիտություն:

**Օրակարգի երրորդ՝** «ԵՊՀ ԻՄ–ի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

**Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված.**

- 1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող Հայկ Արթուրի Դանիելյանին՝ **«Վազգեն Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
- 2) Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Սարգսարիտա Վահանի Խառատյանին՝ «Մոնթե Մելքոնյան»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու և հասարակական ակտիվ գործունեության համար:
- 3) Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Հասմիկ Հարությունի Քարտաշյանին՝ «Շավարշ Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ

գերազանց առաջադիմությունն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու և հասարակական ակտիվ գործունեության համար:

- 4) Բնական գիտությունների ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության վճարովի ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Նառա Մարտիկի Մնացականյանին՝ «Համլետ Կարայան»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու և հասարակական ակտիվ գործունեության համար:
- 5) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող **Ռաֆայել Գառնիկի Հարությունյանին՝ «Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
- 6) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Մինավարդ Գագիկի Մելիքբեկյանին՝ «Դավիթ Անհաղթ»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
- 7) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Մերի Սահակի Սարգսյանին՝ «ԵՊՀ ԻՄ»** անվանական կրթաթոշակ՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

**Արտահայտվեցին** – տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Ա. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Շ. Մարգարյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ նշված ուսանողների հասարակական ակտիվությունը որոշվել է ըստ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների ներկայացման:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 22/3**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Բնական գիտությունների ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության վճարովի ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Նառա Մարտիկի Մնացականյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Համլետ Կարայան»** անվանական կրթաթոշակ՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

#### **Որոշում 22/4**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Հասմիկ Հարությունի Քարտաշյանին** 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Շավարշ Մարգարյան»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

#### **Որոշում 22/5**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Տնտեսագիտության ֆակուլտետի «Մերվիս» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Մարգարիտա Վահանի Խառատյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ փետրվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը, նշանակել **«Մոնթե Մելքոնյան»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

#### **Որոշում 22/6**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.



Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող **Հայկ Արթուրի Դանիելյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ փետրվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը, նշանակել **«Վազգեն Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

#### **Որոշում 22/7**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանող **Ռաֆայել Գառնիկի Հարությունյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

#### **Որոշում 22/8**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Մերի Սահակի Սարգսյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

### Որոշում 22/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Մինավարդ Գագիկի Մելիքբեկյանին** 2016–2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել «**Դավիթ Անհաղթ**» անվանական կրթաթոշակ՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու կապակցությամբ:

**Օրակարգի չորրորդ՝** «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների գնահատման համակարգում փոփոխությունների մասին» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ – ում ուսանողների կարողունակությունների գնահատման համակարգը պետք է դարձնել առավել

օբյեկտիվ և բազմակողմանի, մասնավորապես անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսանող հստակ պատկերացնի թե ինչպես է ձևավորվում իր գնահատականը: Պետք է գնահատվի նաև ուսանողի ինքնուրույն աշխատանքը, օտարալեզու գրականությունից օգտվելը, ուսանողի գործնական և սեմինար դասաժամերին ակտիվ մասնակցությունը և այլն, որոնք հնարավորինս կրթությունը կմոտեցնեն պրակտիկային: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ պորտֆոլյոներում գրված գնահատման մեթոդաբանությունը պետք է համապատասխանի նոր մշակվելիք կարգին և լրիվությամբ կիրառվի: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը առաջարկեց Վ. Բրուտյանի գլխավորությամբ կազմել հանձնաժողով, որը կգրադվի նոր կարգի մշակմամբ:

***Արտահայտվեցին*** – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի խորհրդական, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա. Մակարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մարգարյանը և Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին գնահատման ճիշտ պլանավորումը դասախոսի կողմից, որը նշված է նաև պորտֆոլյոներում, ինչպես նաև ուսանողների կարծիքը ենթադրյալ փոփոխությունների վերաբերյալ:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 22/10**

Կարևորելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող համակարգի դերն ու նշանակությունը, գիտելիքների գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես հետադարձ կապ օգտագործելու անհրաժեշտությունը, ինչպես նաև մասնաճյուղում դասավանդման ու ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման, գիտելիքների արդյունավետ գնահատման հնարավորությունն ու արժանահավատությունն ապահովելու

նպատակով, հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 14-րդ ենթակետով ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 21-րդ կետի 14-րդ ենթակետի պահանջները ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ Իջևանի մասանաճյուղում կազմել ուսանողների գիտելիքների գնահատման կարգը փոփոխող հանձնաժողով: (Կազմը համաձայն հավելված 3)
2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահ Վ. Բրուտյանին՝ սեղմ ժամկետում ուսումնասիրել ուսանողների գիտելիքների գնահատման ժամանակակից չափորոշիչները և մասնաճյուղի 09.09.2011թ. համապատասխան կարգում կատարել փոփոխություններ և լրացումներ: Նշված գործընթացի ժամանակ խորհրդակցել պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության հետ, և առանձին դեպքերում հիմք ընդունել նրանց կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունները:
3. Փոփոխված կարգը ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի քննարկմանը:

#### **Ընթացիկ հարցեր:**

**5.1 *Լսեցին*** - « ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտակ Վոլոդյայի Ցուցույանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու» հարցի մասին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 5 նիստում քննարկվել է նույն ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտակ

Վոլոդյայի Ցուցույանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա.Ցուցույանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ. դոցենտ Ա. Ցուցույանը ԵՊՀ ԻՄ-ում 19 տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությանը: Այդ ամենի անառարկելի վկայությունը պետք է համարել Ա.Ցուցույանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքը, որի միջին գնահատականը կազմում է 4.89 բալ:

Ա.Ցուցույանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2002թ: Պաշտպանությունից հետո նա հրատարակել է գիտական 2 հոդված և ուսումնամեթոդական 1 աշխատանք: Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և

դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա. Վ. Յուցուլյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց Ա. Վ. Յուցուլյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

### ***Որոշեցին***

### ***Որոշում 22/11***

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա. Վ. Յուցուլյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական

համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտակ Վոլոդյայի Ցուցույանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արտակ Վոլոդյայի Ցուցույանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

**5.2 Լսեցին** - «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Արթուր Թենգիզի Կոբեյանի հեղինակությամբ «Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման երաշխավորման մասին» գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանության ամբիոնի 04.02.2017թ. կայացած նիստում քննարկվել է այս հարցը և որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին Մանկավարժություն և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Արթուր Թենգիզի

Կորեյանի «Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները» ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Ձեռնարկը գրախոսվել է հ.գ.դ., դոցենտ Վլ. Հ. Միքայելյանի և հ.գ.թ. Լ. Կ. Սարգսյանի կողմից, որոնք փաստել են, որ նշված ձեռնարկն անհրաժեշտություն է արդի գիտական և մասնագիտական կրթության կազմակերպման համար: Ձեռնարկում մանրամասն ու մասնագիտորեն վերլուծության են ենթարկվում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ Էթնոսը, էթնիկությունը, էթնիկ կարծրատիպեր, լարվածություն, ագրեսիա, էթնոցենտրիզմ, քսենոֆոբիա, ցեղասպանություն, որոնք թույլ են տալիս կազմել ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև նշմարում են էթնիկ կոնֆլիկտների պրակտիկ ելքեր: Ձեռնարկի արժեքն առավել կարևորվում է այն հանգամանքով, որ այսօր Հայաստանը գտնվում է էթնոքաղաքական կոնֆլիկտային պայմաններում: Մեր մոտ բացակայում է էթնոհոգեբանական բնույթի հետազոտությունները, իսկ ձեռնարկը լրացնում է այդ բացը: Սույն ձեռնարկը անհրաժեշտ գիտամեթոդական ուղեցույց կձառայի հոգեբանություն ընտրած ուսանողների, մասնագետների և այլ շահագրգիռ անձանց համար:

Հ.գ.թ., դոցենտ Ա.Թ. Կորեյանի «Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները» ուսումնամեթոդական ձեռնարկը համապատասխանում է ուսումնամեթոդական ձեռնարկին ներկայացվող պահանջներին:

### *Որոշեցին*

#### **Որոշում 22/12**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.



Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժություն և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Արթուր Թենգիզի Կոբեյանի «Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները» ուսումնական ձեռնակը:

**5.3 Լսեցին** - «ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ գիտաժողովների կազմակերպման կանոնակարգի հաստատումը» հարցի մասին:

### *Որոշեցին*

#### **Որոշում 22/13**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ գիտաժողովների կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.4 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

### *Որոշեցին*

#### **Որոշում 22/14**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2014թ. սեպտեմբերի 11-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.5 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

### *Որոշեցին*

#### **Որոշում 22/15**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի,

գունանկարի և քանդակի ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2014թ. սեպտեմբերի 11-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.6 Լսեցին** – «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրության հաստատումը» հարցի մասին:

### *Որոշեցին*

#### **Որոշում 22/16**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2011թ. սեպտեմբերի 09-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական

համալսարանի Իջևանի մասնաճյուղի արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի կանոնակարգը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.7 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ –ի կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021թթ.) հաստատելու մասին» հարցի կապակցությամբ:

*Որոշեցին*

#### Որոշում 22/17

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ –ի կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021թթ.)՝ համաձայն հավելված 8-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.8 Լսեցին** – «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրը (2017-2021թթ.) կազմակերպելու կարգը հաստատելու մասին» հարցի կապակցությամբ:

*Որոշեցին*

#### Որոշում 22/18

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրը (2017-2021թթ.) կազմակերպելու կարգը՝ համաձայն հավելված 9-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**5.9. Լսեցին** - «Հրանտ Վարդանյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին» հարցի վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների բիզնես մտածելակերպը զարգացնելու և խրախուսելու համար սահմանել անվանական կրթաթոշակ «Հրանտ Վարդանյան» անվամբ, հաշվի առնելով գործարար, հայկական հայրենական արտադրության առաջամարտիկ, «Գրանդ Հոլդինգ» ազգային առաջատար կորպորացիայի հիմնադիր և ղեկավար, բարեգործ և մեկենաս Հրանտ Միքայելի Վարդանյանի ավանդը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և այլ ոլորտներում: Նա Տավուշի մարզի սահմանամերձ և Արցախի գյուղերում խոշոր, երկարաժամկետ բարեգործական ծրագրեր էր իրականացնում՝ դրանով իսկ նպաստելով տեղական համայնքների զարգացմանը: Կրթաթոշակը կտրվի ԵՊՀ ԻՄ-ի կողմից, այն ուսանողին, ով Տավուշի մարզի տնտեսության զարգացման հետ կապված որևէ նորույթ կներկայացնի:

**Որոշեցին**

**Որոշում 22/19**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ում սահմանել «Հրանտ Վարդանյան» անվանական կրթաթոշակ: :
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար \_\_\_\_\_ Ս. Ս. ԱԹՈՅԱՆ

11.02.2016թ.